

ԿԱՅԾԱԿ ԼԵՓԵՃՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵ՞Ր, ՎԱՆՔԵ՞Ր ՀԱՅԿԱԿԱՆ

Վեհ, անձեռակերտ եկեղեցիներ, վանքեր կաթոգին
Բյուր քաղաքներու կուրծքին շողացող՝ զերթ շքանշան
Կամ ձորերու մեջ հանգիստ խոկացող անտառի ոգին,
Կամ աղավնիներ արծիվի տեսքով՝ խրոխտ ինքնիշխան,
Հավերժ անսասան թառած անմատույց ժայռի գագաթին...

Երբեմն անաղարտ, հաճախ կիսափուլ ու մերթ ավերակ,
Դուք ամայացած դեսպանատուններ երկնային գահի,
Ձեզ համար սիրով ժողովուրդն անխոնջ, երակ առ երակ,
Արյունն ու քրտինք, հանճարն ու ոսկին խառնեց շաղախի,
Որ օր մը ըլլաք իր նեղ օրերու հույսի աղբերակ...

Դարեր շարունակ աստղը հավատքի դարձուցած կանթեղ,
Ան իր մոգական մուրճի հարվածով ապարը հղկեց
Ու անով կերտեց կոթողն այս աննյութ, հրաշքն այս բյուրեղ
Եվ գիտցավ քամել անցավոր կյանքի օրերեն գձուձ
Հավերժությունն այս երբեք չհինցող, չդարձող անթեղ...

Եթե ձեզ կերտեց ավելի շքեղ ի՛ր իսկ երազեն,
Իր բաժն անոր մեջ՝ քրտինքն էր միայն, մաշումն իր հոգու,
Իսկ ներշնչանքը՝ երկինք խոյացող իր մտքի բազեն՝
Քեզմե էր, ով Տե՛ր, երկնային գահի խոստումդ անարկու,
Որուն՝ թույլ տվիր որ դարեր անվերջ ետևեն վազեն...

Վեհ ու տիրական երկինք խոյացող ձեր գմբեթներեն
Իջնող լույսն ըլլա կարծես մայրուղի երկինքեն երկիր,
Ուրկե ղողանջի հանդարտ կշռույթով կարծես կիջնե Տերն՝
Սքողված խունկի գուլաներու մեջ, փոշի լուսածիր՝
Որ կըբարձրանա նրբուղին ավլող իր լայն քղանցքեն...

*
* *

Դո՛ւք, աստվածակերտ եկեղեցիներ՝ վանքե՞ր հայկական
Վերջին ապավենն, հույսը գերագույն՝ թույլի՛ն, ինկածին,
Որոնք այս կյանքեն իսպառ խորտակված՝ ձեր դուռը կու գան
Ու ետ կըդառնան պայծառ հավատքով լեցված կենսածին.
Նկուն, ծնրադիր որմերուն առջև ձեր նվիրական,
Երբ մոմ կըվառեն մրմունջն աղոթքի ջրդեղած լացով,
Երկչոտ լույսն անգամ այդ արցունքին մեջ կըլլա ծիածան՝
Անոնց թխպամած սիրտը բուժելով ջինջ այգաբացով...
Դուք խաղաղության ու վեհ իտեալի քարե մեղեդին,
Արտաբերումն եք մշտնջենության անլուռ հագագին...:

«Տաղեր սիրոյ և մորմոքի»
Բեյրութ, 1980 թ.